




ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎ ՊՈԼՍԱՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԶԱՐԵՀ ԽՐԱԽՈՒՆՈՒՆ

Ընդառաջելով Կոստանդնուպոլսո չայոց Պատրիարք գերաշնորհ Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանի խնդրանքին, Ամենայն չայոց Վեհափառ Հայրապետը բազմամյա ստեղծագործական եռանդի և հասարակական թշուղն գործունեության համար «Սուրբ Սահակ—Սուրբ Մեսրոպ» շքանշանով պարգևատրեց պոլսահայ բանաստեղծ և անվանի մոսկովորական Զարեհ Խրախունուն:

Ամենապատիվ Պատրիարք Հայրը Վեհափառ Հայրապետին գրել էր հետևյալ նամակը.

ՊԱՏՐԻԱՐԶ ՍՐԲԱԶԱՆ ՀՈՐ ՆԱՄԱԿԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Վեհափառ Տէր,

Մեր այս գրութեամբ խնդրանք մը եւ առաջարկ մը կը ներկայացնենք Ձեր Սրբութեան վասն բանաստեղծ Զարեհ ԽՐԱԽՈՒՆՈՒՆ, որ հրափրուած ըլլալով հայրենիքի Արտասահմանի հետ մշակութային կապի կազմակերպութեան վարչութեան Հայաստան կուգայ օրերս: Ինչպէս ծանօթ պիտի ըլլայ Ձեր Ա. Օծութեան Զարեհ ԽՐԱԽՈՒՆԻ Պոլսահայութեան եւ Արեւմտահայութեան լաւագոյն բանաստեղծներէն մէկն է: Մեր խնդրանքըն առաջարկելէ առաջ կը փափաքինք համառօտիւ անդրադառնալ իր մասին:

Զարեհ Խրախունի ծնած է 1926-ին, Իսթանպուլ: Իր աւագանի եւ ընտանեկան անունն է ԱՐԹՕ Ծիւմպիշեան: Իր նախակրթութիւնը եւ բարձրագոյն ուսմունքը աւարտած է տեղւոյս Վիեննական Միփթարեան Վարժարանի մէջ, որ այն օրերուն մեր լաւագոյն վարժարանն էր գրեթէ ամէն մասամբ, բայց մանաւանդ հայերէն լեզուի հիմնական ուսուցմամբ, այնպէս որ ներկայիս մեր գրողներուն եւ մտաւորականներուն մեծագոյն մասը այդ դպրոցէն շրջանաւարտ են:

Ապա յաճախած է Իսթանպուլի Համալսարանին Գրականութեան ֆակուլթէի Փիլիսոփայական գիտութիւններու բաժինը. շրջանաւարտ եղած է 1951-ին: Փիլիսոփայութեան եւ հոգեբանութեան մարզին մէջ կ'ունենայ

միջազգային չափանիշով ուսուցիչներ, օրինակ փրոֆեսորներ՝ Էրնսթ ֆոն Ասթեր, Վիլհելմ Փեթերս, Հայնց Հայմգեթ, Վալթեր Զրանց եւ ուրիշներ:

Գրական նախափորձերը կը կատարէ 1943-էն սկսեալ, երբ տակաւին աշակերտ էր Միխայիլ Լիսէի մէջ: Իր առաջին հրատարակուած գործն է քերթուած մը «ՅԱՂԹԱՆԱԿԸ» որ լոյս տեսած է 1948-ին. ինչ որ կը նշանակէ թէ անդի քան 40 տարիներ գրականութեան պատմէշին վրայ է Խրախունին:

1952—1958 իբրեւ ուսուցիչ պաշտօնավարած է Էսսենի Լիսէի մէջ, դասաւանդելով Փիլիսոփայութիւն, Տրամաբանութիւն, Հոգեբանութիւն եւ Հայերէն: Նոյն ժամանակամիջոցին՝ տարի մըն ալ կը պաշտօնավարէ Կեդրոնական Վարժարանի մէջ, ասանդելով նոյն դասերը եւ լինելով օգնական տնօրէն:

Խրախունի ցարդ հրատարակած է հետեւեալ 11 բանաստեղծական գիրքերը:

- | | |
|------------------------------|------------------------------|
| 1. ՔԱՐ ԿԱԹԻԼՆԵՐ, 1964 | 2. ԵՍ ԵՒ ՈՒՐԻՇՆԵՐ, 1964 |
| 3. ԼՈՒՍՆԱՊԱՐՏԷԶ, 1968 | 4. ՀԱՏԸՆՏԻՐ, 1970 |
| 5. ՍՏՈՒԵՐ ԵՒ ԱՐՁԱԳԱՆԳ, 1973 | 6. ՏՕՆԱԿԱՐԳ, 1973 |
| 7. ԶԲՕՍԱՊՏՈՅՏ, 1978 | 8. ԱՄՊ ԵՒ ԱԻԱԶ ԱՓԵՐՈՒՍ, 1982 |
| 9. ԴԻԻՑԱԶՆԱՀԱՆԴԷՍ, 1984 | 10. ՈՒՂԻՆԵՐ, 1987 |
| 11. ՍՏՈՒԵՐ ԵՒ ԱՐՁԱԳԱՆԳ, 1988 | |

Ասոնցմէ «ՏՕՆԱԿԱՐԳ»-ը եւ «ԴԻԻՑԱԶՆԱՀԱՆԴԷՍ»-ը արժանացած են Ալեք Մանուկեան մշակութային հիմնադրամի մրցանակին:

«Դիւցազնահանդէս»-ը ստացած է նաեւ Փարիզի ֆրանսահայ Ընկերակցութեան «Էլիզ Գալուքեան-Ալվազեան» գրական մրցանակը 1985-ին: Առաջին երկու հատորները 1965-ին արժանացած են Պէյրութի «Անահիտ» գրական մրցանակին: Իսկ առաջին երեք հաւաքածոներու ամբողջութիւնը «Ես եւ Ուրիշներ» անունով հատորի մը վերածուած, լոյս տեսած է Երեւանի մէջ, 1982-ին:

Կատարած է թարգմանութիւններ Կրիմ Եղբայրներէ, Անտերսէնէ, որոնք հրատարակուած են առանձին հատորներով: Արձակ կամ տաղաչափեալ արեւմտահայերէնի վերածած է Յ. Թումանեանի ՔԱԶ ՆԱԶԱՐԸ, ԳԻՔՈՐԸ, ՓԱՐԻԱՆԱՆ, ԿԱԹԻԼ ՄԸ ՄԵՂՐԸ, ԱՆԲԱԽՏ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԸ, ելն:

Կ'աշխատակցի Պոլսահայ բազմաթիւ թերթերու, որոնց մէջ են երբեմնի ՍԱՆ-ը եւ ՇՈՂԱԿԱԹ-ը, եւ այսօրուան ՄԱՐՄԱՐԱ-ն, որուն գրական էջերուն մշտական աշխատակից եղած է: Կը ստորագրէ բազմաթիւ յօդուածներ, ուսումնասիրութիւններ, գրախօսականներ, խմբագրականներ: Կը կատարէ թարգմանութիւններ մասնատրաբար ֆրանսական արդի գրականութենէ: Առաջնորդ կը հանդիսանայ երիտասարդ խոստումնալից գրողներու, եւ առաջնորդողի հանգամանք ունեցող իր յօդուածներով կը բնորոշէ այն հիմնական ուղղութիւնը եւ սկզբունքները Իսթանպուլահայ նոր բանաստեղծութեան, զոր ինք կը կոչէ «Առարկայական Խորհրդապաշտութիւն» (Սիմպոլիզմ Օպէէքթիֆ):

Իր խմբագրական աշխատանքով լոյս տեսած են՝ Յ. Թումանեանի Հարիւրամեակի, 1969, Պետրոս Դուրեանի Մահուան Հարիւրամեակի, 1973, Ա. Ներսէս Շնորհալիի Ութհարիւրամեակի, 1973, Յովհաննէս Կոլոտ Պատ-

րիարքի Ծննդեան Երեքհարիւրամեակի, 1978 եւ Հ. Գաբրիէլ Վրդ. Այանեանի Յոբէլիական Յուշամատենանի գրքոյկները:

Վերեւ ըստածներու լոյսին տակ բացայայտ կ'երեւի, որ Զարեհ Խրախունի արդարեւ ոչ միայն մեր լաւագոյն բանաստեղծներէն է այլ մտեւ մեր գործօն մտաւորականներէն է, որ լիագոյնս ծառայած է եւ կը շարունակէ ծառայել հայ գիրին, գրականութեան եւ մշակոյթին: Հսկայ ներդրում կատարած է անոնց մէջ եւ բացած է նոր ուղիներ եւ պայծառ հորիզոններ, որոնք թէ ճոխացուցած են մեր լեզուն եւ թէ ընդարձակած այդ լեզունով արտայայտուելու կարելիութիւնները:

Զարեհ Խրախունի ներկայիս եւս կը շարունակէ իր բանաստեղծական ստեղծագործութիւնը, եւ իր կարեւոր մասնակցութիւնը կը բերէ մեր համայնքի գրական ու մտաւորական ձեռնարկներուն: Ան միաժամանակ մեր եկեղեցիի գիտակից ու հաւատաւոր անդամներէն է:

Հետեւաբար մենք սիրով ու համոզումով կ'առաջարկենք, եթէ Զեր Ս. Օծութեան ալ հաճոյ թոյի, բանաստեղծ եւ մտաւորական Զարեհ Խրախունին վարձատրել Զեր իսկ ստեղծած՝ եւ առ հասարակ գրողներու եւ հասարակական գործիչներու ընծայուած Ս. ՆԵՐՍԷՍ ԾՆՈՐՀԱԼԻ շքանշանով: Ասով պատուած պիտի ըլլաք նաեւ Խթանպուլահայ համայնքը, որուն հաւուազատ ու տաղանդաւոր զաւակներէն է բանաստեղծ Զարեհ Խրախունի:

Մեր համայնքի հաւատարմական զգացումները անպակաս եղած են հանդէպ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ պիտի շարունակեն այդպէս մնալ: Մեր ժողովուրդին որդիական սէրն ու յարգանքը վառ է Զեր Անձին հանդէպ եւ պիտի շարունակէ այդպէս մնալ: Մեր սրտագին աղօթքը եւ մշտական մաղթանքն է, որ Աստուած շարունակէ շնորհել Վեհիդ տոկուն քաջատողջութիւն շարունակելու համար եւս առաւել երկար տարիներ հովուելու Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին:

Մատչիմք ի համբոյր Վեհիդ Օծեալ Ս. Աջոյն եւ մնամք միշտ խոնարհ Աղօթակից:

Ընդառաջելով Ամենապատիւ Պատրիարք Հոր խնդրանքին, Վեհափառ Հայրապետը հետևյալ սրբատառ կոնդակով պարգևը շնորհեց վաստակաշատ բանաստեղծին:

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԳՐԱԿԱՆ ՄՇԱԿ ԶԱՐԵՀ ԽՐԱԽՈՒՆԻԻՆ
ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՈՂԶՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ:

Խթանպուլ


Մեզի համար անհուն մխիթարութիւն է որ Աստուծոյ օգնականութեամբ, Զեզի յատուկ տաղանդով ու ներշնչանքով, քառասուն տարիներ շարունակ Դուք կը ծառայէք հայ գրին ու գրականութեան, Զեր հեղինակած բազում երկերով հարստացնելով արևմտահայ գրականութեան ոսկի գանձարանը:

Մենք բարձրօրէն կը գնահատենք Զեր գրական գեղարուեստական վաստակը մարդասիրական ու բարոյական վեհ գաղափարներով հագեցած

ու նաև Ձեր եկեղեցանուէր հասարակական բեղուն գործունէութիւնը Իսթանպուլի հայ համայնքէն ներս, որով Դուք կը հանդիսանաք վերջին տասնամեակներու արեւմտահայ կեանքի ստեղծագործ փայլուն մէկ ներկայացուցիչը:

Այդ, գոհունակ սրտով կ'ընդառաջենք Թուրքիոյ հայոց բարեխնամ Պատրիարք Ամենապատիւ Տ. Շնորհք Արքեպիսկոպոս Գալուստեանի միջնորդութեան և այսու Մեր կոնդակով Ձեզի կը հղենք Մեր հայրապետական օրհնութիւնը և կը շնորհենք «ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ-ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ» շքանշանը, մաղթելով որ զայն կրէք Ձեր ազնիւ սրտի վրայ արդար հպարտութեամբ բազում տարիներ, քաջաոռոյցութեամբ, գեղարուեստական նոր իրագործումներով և ընտանեկան երջանկութեամբ:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգով և յաւիտ օրհնեալ ի Տեառնէ և ի Ամեն».



ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Տուաւ կոնդակս ի 21 Հոկտեմբերի

1989 Փրկչական ամի,

և ի տունարիս Հայոց ՌՆԼԸ

ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:

Հմր. 1647

Տպում ենք պարգևյալ բանաստեղծի հետևյալ բանաստեղծությունները՝ խմբագրության կողմից շնորհավորելով նրան հայրապետական պարգևի առիթով:

ԷԶ
ՄԻ
Ա
ԾԻՆ

ԷԶ —

Իջաւ ա'յստեղ Աստուածն հայոց հայրաքար

Ձարկաւ մութնը մոխրատեղին ուրկէ ժայթքեց կրակը նոր տեսիլքին

Եղաւ էջքը լոյսին անճառ հոգիներու աչքերէն ներս մինչեւ խորքը սրտերու

Դրաւ քարը առաջին յաւերժական կառույցին

Բացաւ էջ մը դիցազնական անկրկնելի պատմութեան

Բերաւ փառքը անհաւասար մարտնչումի-գոյատեւման անհնարին պայքարի

Տուաւ փաստը երկրորդ անգամ վերյառնումի, յարութեան.

Էջ — արութեան:

ՄԻ —

Ի մի Աստուած, ի մի Տէր —

Մի հօտ արդար, մի հովիւ քաջ

Մի — մէկ կեդրոն, բիր շրջանակ